



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ, Ա. Խաչատրյան-1

21 սեպտեմբեր 2023

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ի՝ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ բնակիչներ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ.

Այսօր 2023 թվականի Սեպտեմբերի 21-ին Հայ ժողովուրդը տոնում է Հայաստանի անկախության 32-րդ տարելիցը: Յուրաքանչյուր ազգի և պետության լինելիության ապացույցն անկախությունն է և այսօրվա դժվար իրավիճակի միակ ելքը մեր անկախությունը պահելն ու պահպանելն է: Սա այն օրն է, որին մենք հասել ենք մի քանի սերունդների համառ պայքարի, անձնուրացության, քաջության և տոկունության շնորհիվ:

Խոնարհվում եմ մեր բոլոր հերոսների, հերոսածին մայրերի և որդեկորույս ընտանիքների առջև:

Փա՛հք ու պատիվ հայրենիքի համար ընկածներին:

Հայրենիքի նկատմամբ սերը ոչ ոք չի կարող խլել, եթե դեռ կանք, ուրեմն պարտավոր ենք մտածել ոտքի կանգնելու մասին, պայքարելու, մեզ վերագտնելու ու մոխրից վերածնվելու մասին՝ ի հեճուկս մեր թշնամիների: Ի վերջո շնորհավորում եմ մեզ բոլորիս, հուսալով որ այսուհետ ուրախ և ապահով ենք նշելու սեպտեմբերի 21-ը:

Մաղթում եմ նաև բարգավաճում և ամուր հավատք մեր պետականության լուսավոր ապագայի հանդեպ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ